ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/60

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի (պետական ռեգիստրի վկայական՝ թիվ 56.02522),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3196-2021 գրությամբ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.02.2021թ. թիվ 01/61-4013 գրության հիման վրա 04.03.2021թ. թիվ 26/26-1/3196-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«2021թ. փետրվարի 6-ին Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ա/Ձ) հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/23» ծածկագրով բաց մրցույթի հրավերի գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որն ի դեպ հայտարարված է եղել «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ:

2021թ. փետրվարի 8-ին տեղի է ունեցել հայտերի բացումը, իսկ փետրվարի 10-ին Ա/Ձ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին ստացվել է ծանուցում (կից ներկայացնում ենք փոստից արված արտապատկերում և ծանուցման գրությունը), ըստ որի Ա/Ձ-ի և Արամ Զարգարյան Ա/Ձ-ի հայտերում առկա է անհամապատասխանություն(հայտերում բացակայում է ծավալաթերթ-նախահաշիվը), և առաջարկվել է սահմանված ժամկետում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Նույն օրը՝ փետրվարի 10-ին Ա/Ձ-ն սահմանված կարգով շտկել է անհամապատասխանությունը, և ծավալաթերթ-նախահաշիվը ուղարկվել է Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ gagik.huroyan@yerevan.am(կից ներկայացնում ենք ուղարկումը հաստատող փոստից արված արտապատկերում և բացակայող ծավալաթերթ-նախահաշիվը):

Ապա 2021թ. փետրվարի 12-ին Ա/Ձ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին կրկին ստացվել է ծանուցում (կից ներկայացնում ենք փոստից արված արտապատկերում և ծանուցման գրությունը), ըստ որի քանի որ գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ ընտրված մասնակիցներին որոշելու նպատակով Ա/Ձ-ի, Արամ Զարգարյան Ա/Ձ-ի և Վանշին Գրուպ ՍՊԸ-ի տնօրեններին հրավիրվում է միաժամանակյա բանակցությունների՝ գների նվազեցման շուրջ, որը տեղի կունենար փետրվարի 17-ին ժամը 11.00-ին: Ի դեպ նշենք, որ մինչ այդ և անգամ մինչև բանակցությունների պահը, որևէ նամակ, հանձնաձողովի նիստի արձանագրություն էլ. փոստով կամ այլ կերպ Ա/Ձ-ն չի ստացել, որտեղ կարտացոլվեին մյուս մասնակիցները գները:

2021թ. փետրվարի 17-ին Ա/Ձ-ն ներկայացել է բանակցություններին , բացի Ա/Ձ-ից այլ մասնակցի ներկայացուցիչ չի ներկայացել բանակցություններին և Ա/Ձ-ն բանակցություններում ներկայացրել է նոր գնային առաջարկ՝ այդ փաստը ֆիքսելու նպատակով ստորագրելով համապատասխան փաստաթղթի վրա, ապա հանձնաժողովի քարտուղարը բանավոր տեղեկացրել է, որ պետք է կրկին ուղարկվի նոր ծավալաթերթ-նախահաշիվ նոր գնով հաշվարկված: Նույն օրը՝ փետրվարի 17-ին Ա/Ձ-ն նոր գնային առաջարկով հաշվարկված ծավալաթերթ-նախահաշիվը ուղարկել է Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ gagik.huroyan@yerevan.am(կից ներկայացնում ենք ուղարկումը հաստատող փոստից արված արտապատկերում և նոր ծավալաթերթ-նախահաշիվը): Ապա հաջորդ օրը՝ 2021թ. փետրվարի 18-ին Ա/Ձ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին ստացվել է գնահատման արդյունքների հրապարակում, որտեղ կցված է եղել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (կից ներկայացնում ենք փոստից արված արտապատկերում և պայմանագիր կնքելու որոշումը), ըստ որի Ա/Ձ-ն ճանաչվել է հաղթող ընտրված մասնակից և սահմանվել է 10 օրացույցային օր անգործության ժամկետ: Նշենք որ այստեղ ևս հանձնաժողովի նիստի արձանագրություն չի եղել կցված և առահասարակ այս ընթացակարգի շրջանակներում երբևէ Ա/Ձ-ն չի ստացել հանձնաժողովի նիստի որևէ արձանագրութուն. արձանագրությունների մասին Ա/Ձ-ին միայն հայտնի է դարձել գնումների հետ կապված բողոքներ քննող անձի էլ. հասցեից ստացված նամակին կից փաստաթղթերով:

Այդ ընթացքում Ա/Ձ-ն արդեն զբաղված էր բանկային երաշխիք վերցնելու ընթացակարգով, և արդեն հայտ էր ներկայացվել բանկին, որ բանկը տրամադրի համապատասխան գումարի չափով երաշխիքները: Ավելի վաղ Ա/Ձ-ն արդեն ուներ շահած այլ մրցույթ, և պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ստացվել էր, և փետրվարի 26-ին այդ պայմանագիրը և բանկային երաշխիքները առձեռն ներկայացնելով Պատվիրատուին այդ օրը Ա/Ձ-ին հայտնի դարձավ որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/23» ծածկագրով բաց մրցույթը չկայացած է հայտարարվել: Այդ ժամանակ Ա/Ձ-ն կրկին ստուգելով էլ. հասցեն գտնում է մի ոչ ավտոմատ ծանուցում info@armeps.am կայքից՝ անհամապատասխանության վերաբերյալ (կից ներկայացնում ենք փոստից արված արտապատկերում և ծանուցման գրությունը), ըստ որի Ա/Ձ-ի ծավալաթերթ-նախահաշվում առկա է անհամապատասխանություն. լրացված ծավալաթերթ-նախահաշվի առաջին բաժնի համար սահմանված առավելագույն կշռի տոկոսը չի համապատասխանում հրավերի

պայմաններին, ի դեպ բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն փաստի վրա, որ ոչ ավտոմատ ծանուցումը ստացվել էր փետրվարի 19-ին, սակայն ծանուցման գրությունը ստորագրված էր գնումների համակարգողի կողմից փետրվարի 16-ին, և այդ ժամանակ Ա/Ձ-ն առանց հապաղելու կրկին շտկում է առկա անհամապատասխանությունը՝ ծավալաթերթ-նախահաշվի առաջին բաժնի համար սահմանված առավելագույն կշռի տոկոսը համապատասխանեցնում է և կրկին ուղարկում է Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ gagik.huroyan@yerevan.am(կից ներկայացնում ենք ուղարկումը հաստատող փոստից արված արտապատկերում և նոր ծավալաթերթ-նախահաշիվը):

Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, Պատվիրատուն մերժում է Ա/Ձ-ի հայտը և ընթացակարգը հայտարարում չկայացած:

Այնուհետև, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջներով (...գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ), ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը սահմանում է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Տեղեկացնում ենք որ Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել ժամկետանց որևէ պարտավորություններ, հարկ եղած դեպքում կարող ենք ներկայացնել համապատասխան տեղեկանք:

Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ըստ իս, Պատվիրատուն թերևս ՀՀ

Ֆինանսների նախարարին ուղղված գրությամբ ցանկացել է ղեկավարվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա. մասի պահանջներով.

մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սակայն, ղեկավարվել է բացարձակապես այլ կետով:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Գնահատող հանձնաժողովը փետրվարի 19-ի թիվ 6 արձանագրության 1.1 կետով որոշում է կայացրել՝ փետրվարի 17-ի թիվ 5 արձանագրության 2.1 և 3.1 կետերը ուժը կորցրած ճանաչել (հաշվի առնելով, որ գնահատման արդյունքում տեղի է ունեցել վրիպակ, Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ, ուստի անհրաժեշտ էր ներկայացնել նոր ծավալաթերթ-նախահաշիվ): Այդ կայացված որոշման մասին Ա/Ձ-ին չի տեղեկացվել, փոխարենը Ա/Ձ-ին թերևս փետրվարի 18-ին ծանուցվել էր միայն պայմանագիր կնքելու որոշման մասին, և դրանից հետո Ա/Ձ-ն այս ընթացակարգի շրջանակներում սպասում էր միայն պայմանագրի նախագծի ծանուցմանը, բացի այդ փետրվարի 19-ին ոչ ավտոմատ ծանուցում էր ստացվել info@armeps.am կայքից, սակայն ծանուցման գրությունը ստորագրված էր գնումների համակարգողի կողմից փետրվարի 16-ին և կցված չէր հանձնաժողովի նիստի արձանագրությունը, որտեղ մանրամասն կնկարագրվեր հայտնաբերված անհամապատասխանության մասին, ըստ այդմ Ա/Ձ-ն պարտավոր չէր ստացված ինչ որ նախկինում ստորագրված գրությանը ուշադրություն դարձնել և համապատասխան պատասխան տրամադրեր, քանի որ բոլորիս թերևս հայտնի է, որ info@armeps.am կայքից բազմաթիվ նամակներ են ստացվում որոնք անգամ ուղղված չեն լինում հասցեատիրոջը, իսկ այդ նամակի հետ անգամ կցված չի եղել հանձնաժողովի նիստի արձանագրություն, որտեղ մանրամասն նկարագրված կլիներ նախորդ նիստում տեղի ունեցած վրիպակի մասին:

Արդյունքում ստացվում է, որ հանձնաժողովի նիստերով կայացված որոշումների վրիպակների պատճառով, Ա/Ձ-ին չտեղեկացնելու արդյունքում, Ա/Ձ-ն զրկվել է

պայմանագիր ստորագրելու իր իրավունքից և անգամ հայտնվել է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընգրկվելու վտանգի առջև»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը խնդրել է չկիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/60 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.02.2021թ. թիվ 01/61-4013 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը:

Գնման ընթացակարգի գների նվազեցման նպատակով վարվող բանակցությունների արդյունքում Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանն առաջարկել է նոր գին:

Մասնակցի կողմից ներկայացված նոր ծավալաթերթում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ լրացված ծավալաթերթ-նախահաշվի առաջին բաժնի համար սահմանված առավելագույն կշիռի տոկոսը չի համապատասխանել հրավերի պայմաններին:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի

կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/60 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/60 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/60 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևան քաղաքում Կարեն Դեմիրճյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/23» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցներին որոշելու նպատակով անցկացվել են գների նվազեցման բանակցություններ, որին ներկայացել է Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը, ում կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից և որոշվել է անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից ներկայացված նոր ծավալաթերթ նախահաշվում առկա է անհամապատասխանություն, այն է՝ Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշվի առաջին բաժնի համար սահմանված առավելագույն կշռի տոկոսը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 19.02.2021թ. Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3196-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 04.03.2021թ. թիվ 01/61-4013 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ա/Ձ Կառլեն հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևան քաղաքում Կարեն Դեմիրճյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/23»

ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի հայտում բացակայել է ծավալաթերթ նախահաշիվը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունը Մասնակցի կողմից շտկվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցներին որոշելու նպատակով անցկացվել են գների նվազեցման բանակցություններ, որին ներկայացել է Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը, ում կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ:

Նույն արձանագրության համաձայն՝ ***Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից և որոշվել է անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:***

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից ներկայացված նոր ծավալաթերթ նախահաշվում առկա է անհամապատասխանություն, այն է՝ Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշվի առաջին բաժնի համար սահմանված առավելագույն կշռի տոկոսը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

<u>Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 19.02.2021թ. Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:</u>

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և կարգով հստակ սահմանված են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի գործողությունների հաջորդականությունը և ժամկետային սահմանափակումները, որոնք իրենց հերթին հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ

սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 17.02.2021թ. Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելուց հետո միայն, այն է՝ 19.02.2021թ. նիստի ընթացքում է արձանագրել Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա անհամապատասխանությունը և ծանուցել վերջինիս անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, այսինքն՝ սահմանված ընթացակարգի խախտմամբ է արձանագրել անհամապատասխանությունը, որից հետո միայն անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցել Մասնակցին, ինչի արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, որի պայմաններում Մասնակիցն արդեն իսկ հաղթող մասնակից ճանաչված լինելու դեպքում, չի ունեցել իրավական ակնկալիք առ այն, որ իր կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում հետագայում կարող է արձանագրվել անհամապատասխանություն և վերջինս կարող է ծանուցվել անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, արդյունքում հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունները մեկնաբանվել են ի վնաս Մասնակցի և հանգեցրել վերջինիս հայտը մերժելուն:***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3196-2021 գրությամբ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**